

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ

Մի մեղադրագրի հետքերով*

Բանալի բառեր – Եղիշե Չարենց, Գլավլիտ, Մոսկվա, գրաքննություն, կոմունիստական կուսակցություն, ստեղծագործություն, գրականություն:

Շուրջ մեկ դար խոսվում ու գրվում է մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի հանձարեղ ստեղծագործությունների և բուն ու անսովոր կյանքի մասին և էլի կգրվի մինչև որ լիակատար չբացահայտվեն նրա գրական դիմանկարի ու առեղծվածային մահվան բոլոր ծալքերը:

Չնայած Չարենցը մեծ պաթոսով գովերգել է «Մեծ Հոկտեմբերը», բանաստեղծի իր գորեղ գրչով մեծարել է Վ. Լենինին, երգեր է հյուսել համաշխարհային հեղափոխության և «Աշխարհի կենտրոն Մոսկովի» մասին, իսկ 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ գտնվել է «կարմիրների» դիրքերում, այնուամենայնիվ դրանք հավատարմության բավարար ապացույցներ չեն եղել, որպեսզի բռնկուն և ոչ ստանդարտ մտածող ու գործող բանաստեղծը չհայտնվի խորհրդային գրաքննիչների ուշադրության կենտրոնում, իսկ հետագայում՝ քաղաքական հետապնդումների ու բռնաձնշումների թակարդում:

Ուշագրավ է, որ դեռևս 1922 թվականին, երիտասարդ, հեղափոխական պաթոսով լեցուն Ե. Չարենցը հայտնվել է խորհրդային գրաքննիչների տեսադաշտում: Ասվածի ցայտուն վկայությունն է Հայաստանի ազգային արխիվի ՀԿԿ կենտկոմի ֆոնդում պահվող վավերագրերից մեկը: Դա մի հակիրճ դիմում-մեղադրագիր է, որը Մոսկվայի «Մուրձ և մանգաղ» հրատարակչության հայերեն գրականության գրաքննիչ Վ. Տեր-Գրիգորյանը 1922 թ. դեկտեմբերի 1-ին ուղղել է իր վերադասին՝ Խորհրդային Ռուսաստանի լուսավորության ժողկոմատի կազմում գործող Գրականության և հրատարակչական գործերի գլխավոր վարչության (Գլավլիտի) ղեկավար Պ. Լեբեդև-Պոլյանսկուն:

Գրաքննիչը տեղեկացնում էր, որ ՀՍԽՀ միջոցներով Մոսկվայում տպագրված Ե. Չարենցի բանաստեղծությունների երկհատորյակը «կոմունիստ իրազեկ ընկերների կարծիքով՝ կրում է լիակատար ջարդարարական (погромный)-կղերական-ազգայնական բնույթ»¹: Նա պատրաստակամություն էր հայտնում գրքի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ

*Ընդունվել է տպագրության 20.04.2016
1 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 2, գ. 35, թ. 58:

տրամադրել, քանի դեռ այն չի տարածվել:

Ծանոթության կարգով նշենք, որ Չարենցի ստեղծագործությունների երկհատորյակը տպագրվել է Մոսկվայում, 1922 թ. փետրվար-մայիսին ՀՄԽՀ պետական հրատարակչության կողմից՝ Խորհրդային Հայաստանի մշակույթի տան տպարանում²: Երկհատորյակի «Երկու խոսք» վերտառությամբ առաջաբանը գրել է հեղինակը 1921 թ. դեկտեմբերին՝ Մոսկվայում: Երկհատորյակում ամփոփված են 1910-ական թվականների սկզբներից մինչև 1921 թ. Չարենցի հեղինակած բանաստեղծություններն ու պոեմները:

Մոսկվայի հայ գրական-գեղարվեստական խմբակցության (հիմնվել էր 1922 թ. մայիսին) հրապարակային նիստերից մեկում Չարենցի այս երկհատորյակի վերաբերյալ «տիպիկ մանր-բուրժուական» և «քաղքենի երգիչ» գռեհիկ-սոցիոլոգիական բնորոշում-պիտակներով հագեցած դասախոսությամբ հանդես է եկել կոմունիստ գրականագետ Գուրգեն Հայկունին³՝ իր առջև խնդիր դնելով բացահայտել բանաստեղծի ոչ ավելի ոչ պակաս «կղերական, շովինիստական, պոռոնոգրաֆիական, հետադիմական» էությունը: Ներկաներից շատերը պաշտպանել են զեկուցողի տեսակետը և առաջարկել դատապարտող «բանաձև» մշակել և ուղարկել հայկական թերթերին: Գ. Հայկունուն իբրև հակազեկուցող հանդես եկող մոսկվաբնակ արձակագիր Կարեն Միքայելյանը⁴ հակադրվել է նրան՝ Չարենցին բնորոշելով որպես «պրոլետարական երգիչ»⁵:

Ու քանի որ Հայկունու կողմից Չարենցին ուղղված այս մեղադրանքները շատ շուտով գրեթե նույնությամբ կրկնվել են գրաքննիչ Վ. Տեր-Գրիգորյանի գրպարտագրում, դժվար չէ եզրակացնել, որ նրա դիմումում հիշատակված «կոմունիստ իրազեկ ընկերները» ամենայն հավանականությամբ Գ. Հայկունին ու իր գործակիցներն էին:

Ավելին, 1960-ական թթ. կազմված Չարենցի երկերի բազմահատորյակի նյութերը ցույց են տալիս, որ բանաստեղծը այս հարցի հետ կապված նամակագրական սերտ կապի մեջ է եղել արձակագիր Կ. Միքայելյանի հետ: Ի պատասխան Չարենցի երկհատորյակի առթիվ Գլավլիտ ուղարկված գրպարտագրի առնչությամբ 1923 թ. մարտի 2-ին վերջինիս կողմից իրեն ուղղված նամակի՝ Երևանից Չարենցը հայտնում էր «սիրելի Կարենին», որ իրեն քիչ է հուզում «Գլավլիտ ուղարկված պրովոկացիոն գրությունը» և հավելում. «Մանավանդ որ հարկ եղած պատասխանը կտրվի պրովոկատորներին մեր կենտրոնական օրգանների կողմից»⁶: Հետագայում նրա երկերի ժողովածուն հրատարակության պատրաստած Ա. Զաքարյանը իր

2 Տե՛ս **Չարենց եղիշե**, Երկերի ժողովածու, հատ. 1, 2, Մոսկվա, 1922:

3 Գուրգեն Հայկունի (1889-1966). Ծնունդով արևմտահայ (Ալաշկերտի գավառից): Կուսակցական գործիչ, ԽՄԿԿ անդամ 1905 թ., գրող, հրապարակախոս, թարգմանիչ: Սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Մոսկվայի առևտրական ինստիտուտում, մասնակցել է ընդհատակյա հեղափոխական աշխատանքներին քաղաքացիական կռիվներին: 1918 թ. սկզբին Վ. Լենինի հանձնարարությամբ հիմնել է Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որը պետք է աշխատանք տաներ հիմնականում արևմտահայ գաղթականության շրջանում: Մասնակցել է Կոմիտեների հիմնադիր կոնգրեսին: Խմբագրել է թերթեր, ունի տպագրված գրական-գեղարվեստական գործեր:

4 Կարեն Միքայելյան (1883-1942). հայ գրող, ծնունդով Ագուլիսից: Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, այնուհետև՝ Մոսկվայի և Ենայի (Գերմանիա) համալսարաններում: Մասնակցել է Վ. Բոլշևիկի խմբագրությամբ լույս տեսած հայ պոեզիայի անթոլոգիայի կազմման աշխատանքներին: 1917 թ. հետո աշխատել է ՌՍԳԽՀ Ազգությունների ժողովմատի հայկական գործերի կոմիսարիատում, կատարել է թարգմանություններ:

5 «Զուրա», Մոսկվա, 1923, N 1, էջ 13-14:

6 **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատ. 6, Եր., 1967, էջ 397:

ծանոթագրության մեջ թեական ձևով պարզաբանում է տվել, որ Չարենցի երկհատորյակի առթիվ հավանաբար Մոսկվայի հայ գրողների խմբի «բանաձևն» է ուղարկվել Գլավլիտ⁷: Մինչդեռ, ամենայն հավանականությամբ, խոսքը Վ. Տեր-Գրիգորյանի վերը բերված դիմումի մասին է:

Այս դիմումի պատճենը ՌՍԴԽՀ Գլավլիտը կարծիքի համար ուղարկել է նաև ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտե, որն էլ լրացուցիչ պարզաբանման նպատակով այն փոխանցել է ՀԿ(բ)Կ կենտկոմին⁸: Նշենք, որ այդ շրջանում Խորհրդային Հայաստանում գրաքննական գործառույթներն իրականացնում էր Լուսժողկոմատի կազմում գործող Քաղաքական լուսավորության գլխավոր վարչությունը, որը գաղափարական տեսակետից ղեկավարվում էր ՀԿ(բ)Կ կենտկոմի ագիտացիոն-պրոպագանդիստական բաժնի կողմից: Հենց Քաղլուսգլխվարչության կազմում էլ 1923 թ. հունիսին կազմակերպվեց Գրականության, հրատարակչության և խաղացանկի վերահսկողության վարչությունը (Հայգլավլիտ): Այն փաստացի հանդիսանում էր ՌՍԴԽՀ Գլավլիտի ստորադասը:

Վ. Տեր-Գրիգորյանի դիմումը, ինչպես սպասելի էր, բացասական վերաբերմունքի արժանացավ Խորհրդային Հայաստանի ղեկավարության կողմից: Եվ դա պատահական չէր, քանզի ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղարն Աշոտ Հովհաննիսյանն էր, իսկ ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահը՝ Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան): 1923 թ. փետրվարի 22-ին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության նիստում, որի մասնակիցների թվում էին Աշ. Հովհաննիսյանը, լուսժողկոմ Ասքանազ Մռավյանը, Ս. Լուկաշինը, Կենտկոմի ագիտպրոպամասի ղեկավար Ալեքսանդր Շահումվարյանը և ուրիշներ, քննության առնվեց Չարենցի երկհատորյակի վերաբերյալ Վ. Տեր-Գրիգորյանի դիմումը: Կենտկոմը կտրուկ անհամաձայնություն արտահայտեց նրանում առաջ քաշված ձևակերպումների առնչությամբ: Ավելին, որոշվեց դիմումի պատճենն ուղարկել ՌԿ(բ)Կ Մոսկվայի կոմիտեի վերահսկիչ հանձնաժողովին՝ առաջարկելով Վ. Տեր-Գրիգորյանին և նրա դիմումի մեջ նշված կոմունիստներին «նողկալի գրպարտության համար պատասխանատվության ենթարկել», ինչպես նաև գրաքննիչին ազատել զբաղեցրած պաշտոնից: Որոշվեց նաև ՌՍԴԽՀ Գլավլիտին հայտնել, որ Հայկոմկուսի կենտկոմը Վ. Տեր-Գրիգորյանի դիմումը «համարում է անհիմն և ակնհայտ սադրիչ»: Միաժամանակ արձանագրվեց, որ «ՀԿԿ անդամ, պոետ ընկ. Ե. Չարենցի բանաստեղծությունների ժողովածուն ջարդարարական (погромный)-կղերական-ազգայնական բնույթ չունի»⁹:

Ավելին, հավանաբար Հայկոմկուսի կենտկոմի գիտությամբ՝ Եղիա Չուբարի, Եղիշե Չարենցի և Պարույր Ֆոյանի ստորագրությամբ «Պրոլետարական գրականություն, թե խուլիգանների «գրական» արշավանք» վերտառությամբ ծավալուն հոդված տպագրվեց «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում: Հոդվածում կոշտ քննադատության էին ենթարկվում Գ. Հայկունու խմբագրությամբ «Մուրճ և մանգաղ» հրատարակչության կողմից

7 Նույն տեղում, էջ 714-715:

8 Խորհրդային գրաքննությունը, ինչպես որ կուսակցական-պետական ողջ կառավարման համակարգը, ունեցել է կենտրոնաձիգ կառուցվածք: Կարևոր կուսակցական-պաշտոնական գրությունները Մոսկվայից Հայաստան էին ուղարկվում ՌԿ(բ)Կ-ՀամԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեի միջոցով:

9 ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 9 շրջ.:

1923 թ. մարտին Մոսկվայում տպագրված «Քուրա» ամսագրի անդրանիկ համարը և դրա երգիծական հավելված «Կոկորդիլոս»-ը, նաև պրոլետարական գրականության անունից հանդես եկող կեղծ գրականագետներ Գ. Հայկունին, Արշ. Արշարունին, Վ. Վանդեկը և մյուսները: Հոդվածագիրները նշում էին, որ գաղափարախոսական ճակատի «ամենաթույլ պաշտպանված թևը» հանդիսացող գեղարվեստական գրականության ասպարեզն «այսպես թե այնպես **լեզալ է**, համարյա թե **անցենգուր**», ուստի այդտեղ են խուժել զանազան ավանտյուրիստներ և կասկածելի անձիք՝ «ոտնատակ անելով մի կողմից «պրոլետարական» կոչեցյալ կուլտուրայի բողբոջները, մյուս կողմից՝ ընդհանրապես **մարդկային կուլտուրան՝** լեզուն, գրական խոսքը, արվեստն ու գրականությունը»: Ըստ այդմ՝ հոդվածագիրները վերջում առաջարկում էին.

«1. Մաքրել «պրոլետգրողների սառցիացիան»¹⁰ զանազան տիպի խուլիգաններից և կարիերիստներից և

2. Կուսակցական ամենախիստ կոնսերվատիվ միջոցով փրկել պրոլետգրողների սառցիացիան ամեն տեսակի կասկածելի տարրերի ապաստան լիսելուց»¹¹:

Փաստորեն, խորհրդային իշխանության և Կոմկոուսի կողմից հովանավորվող Ե. Չարենցը այդ շրջանում կողմ էր արտահայտվում գեղարվեստական գրականության բնագավառում Կոմկոուսի «ամենախիստ հսկողությանն» ու գրաքննությանը, նույնն է թե՛ խորհրդային բիրտ պետական-կուսակցական համակարգի հաստատմանը: Նա դժվար թե այդ ժամանակ երևակայեր, որ տարիներ անց ինքը դառնալու է այդ նույն համակարգի գոհերից մեկը:

Հարկ ենք համարում առանձնահատուկ նշել, որ Աշ. Հովհաննիսյանի՝ ԸԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար լինելու (1922–1927 թթ.) սկզբնական շրջանում Ե. Չարենցը հովանավորվել է ԿԿ-ի և անձամբ նրա քարտուղարի կողմից և ընդգրկված է եղել գրական, գիտական և քաղաքական «Նորք» հանդեսի խմբագրակազմում: Վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ Չարենցի 1924–1925 թթ. արտասահմանյան գործուղմանը ևս անմիջականորեն օժանդակել են Հայկունուսի ԿԿ-ն և նրա քարտուղարը: Այսպես՝ վերջինիս կողմից 1924 թ. սեպտեմբերին Ամերիկայի բանվորական կուսակցության հայկական հատվածին (սեկցիային) ուղղված մի նամակում կարդում ենք. «Սիրելի ընկերներ, նամակաբեր ընկ. Ե. Չարենցը մեր կուսակցության որոշմամբ մեկնում է Եվրոպա և Ամերիկա՝ դիտելու կապիտալիստական աշխարհի կենցաղը և ծանոթանալու բանվորական շարժման հետ, ինչպես նաև ծանոթացնելու ամերիկահայ մեր ընկերներին՝ Հայաստանի և ԽՍՀՄ գրական շարժումների հետ: Խնդրում են ցույց տալ հարկ եղած աջակցություն»¹²:

Այսպիսով՝ բերված ընդամենը մեկ-երկու վավերագիր նյութերի քննական դիտարկումից կարելի է եզրակացնել.

ա) դեռևս 1920-ական թթ. սկզբներից խորհրդային գրաքննությունը խստությամբ հետևել է հայ գրողների, մշակույթի գործիչների ստեղծագործությունների գաղափարաքաղաքական բովանդակությանը,

¹⁰ Այն գլխավորում էր Ազատ Վշտունին:

¹¹ «Խորհրդային Հայաստան», 25 մարտի 1923 թ., N 61:

¹² ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 50, թ. 58:

բ) երբ 1920-ական թթ. հայ գրական միջավայրում անհաշտ պայքար էր ընթանում գրական տարբեր հոսանքների միջև, միջակ և անտաղանդ գրողները որպես կանոն հարվածի թիրախ էին դարձնում տաղանդավորներին, առաջին հերթին՝ Ե. Չարենցին,

գ) սակայն 1920-ական թթ. սկզբներին Հայկոմկուսի ԿԿ-ը և նրա քարտուղար Աշ. Հովհաննիսյանը առանձնահատուկ ուշադրություն ու հոգատար վերաբերմունք էին ցուցաբերում Ե. Չարենցի հանդեպ: Հետագայում՝ 1930-ական թթ., պրոլետարական-դասակարգային մոտեցմամբ և գաղափարական անաղարտության պիտակներով գրական-քննադատական հարձակումները վերաճեցին ազգային նկարագիր ունեցող տաղանդավոր գրողների ու մտավորականների հանդեպ քաղաքական բռնաճնշումների ու հաշվեհարդարի:

Ստորև ներկայացվում են Ե. Չարենցին առնչվող վերը նշված երկու վավերագրերը, այն է՝ գրաքննիչ Վ. Տեր-Գրիգորյանի մեղադրագիրը և այդ առթիվ ՀԿ(Բ)Կ կենտկոմի նախագահության որոշումը: Փաստաթղթերի բնօրինակները ռուսերեն են, դրանք պահվում են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ՀԿԿ կենտկոմի (թիվ 1) ֆոնդում: Հրապարակման ժամանակ մեր կողմից կատարված միջամտությունները բերված են ուղղանկյուն փակագծերում ([]):

Արարատ Մ. Հակոբյան
Պապյւմ. գիյւր. դոկյորր
Համո Կ. Սուքիասյան
Պապյւմ. գիյւր. թեկնածոս

YEGHISHE CHARENTS TARGETED BY SOVIET CENSORSHIP on the trails of one indictment

Ararat M. Hakobyan
Hamo K. Sukiasyan

Key words – Yeghishe Charents, Glavlit, Moscow, censorship, the Communist Party, work, literature.

ЕГИШЕ ЧАРЕНЦ ПОД ПРИЦЕЛОМ СОВЕТСКОЙ ЦЕНЗУРЫ по следам одного обвинительного акта

Арарат М. Акопян
Амо К. Сукиасян

Ключевые слова – Егише Чаренц, Главлит, Москва, цензура, Коммунистическая партия, произведение, литература.

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

N 1

Մոսկվայի «Մուրձ և մանգաղ» հրատարակչության հայերեն գրականության գրաքննիչի դիմումը Խորհրդային Ռուսաստանի լուսավորության ժողկոմատի Գրականության և հրատարակչական գործերի գլխավոր վարչության (Գլավլիտ) ղեկավար Պ. Լեբեդև-Պոլյանսկուն¹³

1 դեկտեմբերի 1922 թ.
Մոսկվա

Ինձ տեղեկություն է հասել, որ սրանից մի քանի ամիս առաջ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության միջոցներով հրատարակվել է Ե. Չարենցի բանաստեղծությունների երկհատորյակը, որը, կոմունիստ իրազեկ ընկերների կարծիքով, կրում է լիակատար ջարդարարական-կղերական-ազգայնական բնույթ: Իրա համար խնդրում եմ Ձեր կարգադրությունը՝ ծանոթանալու նպատակով վերոնշյալ գրքից մեկ օրինակ ինձ հատկացնելու համար, որպեսզի շտապ կարգով Ձեզ հաղորդեմ մանրամասն տեղեկություններ այդ մասին: Չարենցի գիրքը դեռևս չի տարածվել:

Գլավլիտի աշխատակից՝ Վ. Տեր-Գրիգորյան

ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 35, թ. 58: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 2

Քաղվածք

ՀԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեի Նախագահության նիստի արձանագրությունից

22 փետրվարի 1923 թ.
N 62
Երևան

15. ԼՍԵՑԻՆ – [ՌՍԳԽՀ] ԼԺԿ Գլավլիտի հայերեն գրականության գրաքննիչ Վ. Տեր-Գրիգորյանի դիմումը:

15. ՈՐՈՇԵՑԻՆ – Սույն դիմումի պատճենն ուղարկել ՌԿԿ Մոսկվայի կոմիտեի վերահսկիչ հանձնաժողովին՝ ընկ. Վ. Տեր-Գրիգորյանին և նրա դիմումի մեջ նշված կոմունիստներին նողկալի զրպարտության համար պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ խնդրելով ազատել նրան զբաղեցրած պաշտոնից:

Հայտնել ԼԺԿ Գլավլիտին, որ [ՀԿ(բ)Կ] ԿԿ-ն ընկ. Տեր-Գրիգորյանի դիմումը համարում է անհիմն և ակնհայտ սադրիչ:

Միաժամանակ արձանագրել, որ ՀԿԿ անդամ, պոետ ընկ. Ե. Չարենցի բանաստեղծությունների ժողովածուն ջարդարարական-կղերական-ազգայնական բնույթ չունի:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 9 շրջ.: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

13 Փաստաթղթի վրա դրված է ՌՍԳԽՀ ԼԺԿ Գլավլիտի կնիքը: Այն ուղարկվել է ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Գ. Օրջոնիկիձեին: